ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

26.01.2015թ.
237-ի 8

ՀՀ Ճանապարհային ոստիկանության
պետ պարոն Արսեն Գալստյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գալստյան,

2014թ.-ի նոյեմբերի 26-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու գրվոր հարցմամբ դիմել էր Երեւանի քաղաքապետարանին՝ ի թիվս այլոց խնդրելով հետեւյալ տեղեկությունները.

1. Գույքահարկով հարկվող ինչպիսի՞ փոխադրամիջոցներ են հաշվառված "Թեղուտ" ՓԲ ընկերության հաշվեկշռում:

Երեւանի քաղաքապետարանը պատասխան գրության հայտնել է. "Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ընկերության հաշվեկշռում գրանցված փոխադրամիջոցների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք դիմել փոխադրամիջոցների գծով հաշվառում (գրանցում) վարող համապատասխան լիազոր մարմնին՝ ՀՀ ոստիկանության "Ճանապարհային ոստիկանություն" ծառայությանը":

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք հայտնել, թե "Թեղուտ" ՓԲ ընկերության հաշվեկշռում ինչպիսի՞ փոխադրամիջոցներ են հաշվառված (մակնիշը եւ պետ. համարանիշը):

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի՝ "Տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա՝ … 2) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության … բնության եւ շրջակա միջավայրի պաշտպանության … բնագավառում տիրող իրական վիճակը": **Սույն հարցմամբ խնդրվող տեղեկությունը Երեւանի քաղաքապետարանից ստացված տեղկության հետ վերաբերում է բնապահպանությանը եւ շրջակա միջավայրի գործունեություն ծավալող կազմակերպությանը, որի գործողությունները, այդ թվում՝ հարաբերությունները պետության հետ եւ պարտավորությունների (տվյալ դեպքում՝**

հարկային) կատարումը պետության եւ հասարակության հանդեպ ցույց են տալիս շրջակա միջավայրի եւ բնության վրա ազդեցության ունեցող կազմակերպության կարգավիճակը, գործունեության օրինականությունը, հետեւաբար նաեւ շրջակա միջավայրի եւ բնության վրա ազդեցության իրավաչափությունը: Ուստի, անգամ եթե սույն հարցմամբ խնդրված տեղեկությունները համարվում են գաղտնիք, ապա "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն այդ տեղեկությունները պետք է տրամադրվեն: Նման դիրքորոշում արտահայտել է նաեւ ՀՀ վարչական դատարանը թիվ 4141/05/11 վարչական գործով, ուստի հարկ է հաշվի առնել նաեւ դատարանի մեկնաբանությունը բնապահպանության ոլորտին վերաբերող տեղեկատվության սահմանափակման հնարավոր դեպքում:

Կից ներկայացնում եմ Երեւանի քաղաքապետարանին ուղղված հարցման կրկնօրինակը եւ Երեւանի քաղաքապետարանից ստացված պատասխանի պատճենը:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան